472 Որքա՛ն կուզեմ, օրհնյա՛լ Տեր իմ,

1. Որքա՛ն կուզեմ, օրհնյա՛լ Տեր իմ,
Փարվեմ Քո կրծքին,
Որ պատմեմ Քեզ ցավերս բոլոր,
Բացեմ սիրտը իմ:
    Բացատրես ինձ Քո սերն անհուն,
    Որ ես հասկանամ
    Եվ այս ունայն կյանքի մեջ
    Քեզ չմոռանամ:

2. Ձեռքերիդ մեջ է կյանքը իմ
Այնտեղ՝ երկնքում,
Ուր սուրբերն ու հրեշտակները
Քեզ են գովերգում:
    Թագավորի՛ր Դու իմ սրտում
    Երկնային փառքով,
    Որ ձգտի երկինք սիրտն իմ,
    Ապրեմ Քեզանով:

3. Ո՞վ Տեր, Դու շատ բարձրերում ես,
Բայց սրտով՝ խոնարհ,
Քո փառքը երկնքից վեր է,
Ու սերդ՝ անմար:
    Թագավորի՛ր Դու իմ սրտում,
    Լինեմ ես խոնարհ,
    Տեսնեմ սերդ իմ կյանքում,
    Ապրեմ Քեզ համար: